




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

621.2
G-84

Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

ՍԵՎԱՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ

621.2

Ե-84

Հրատարակւոյցն ԱՆԴՐՈՂԿԱՄԱՌՈՂԵՐՆ ԿԻՅ
Ի ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿՈՄԻՏԵՑԻ

1932

0.04.2013

10 JUL 2010

21.2

5-34

mp

Ա. ՅԵՐԶՆԿՅԱՆ

ՍԵՎԱՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ

083.55

195

Հրատ. Անդրժո՞ղկոմիտի կից՝
ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿՈՄԻՏԵԹԻ

ՍԵՎԱՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ

ՆԼՆԵՍՐԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՅԵՎ ՎՈՌՈԳՄԱՆ. ՇԱՂԿԱՊՄԱՆ ՀԱՐՑԸ

Սոցիալիզմ կառուցող մեր յերկրը, վերսկս ամբողջ Միության անբաժանելի մի մասնիկը, ունի իր առաջնության խնդիրները, ինչպես ամբողջ Միությունը, այն է՝ հիմնովին վերածել մեր յերկիրը ինդուստրիալ աղբյուրային յերկրի, զարկ տալ յերկրի ինդուստրացմանը, ոգտագործելով բոլոր բնական ուժերը և հարստությունները:

Արդյունաբերության զարգացումը սերտ կերպով կապված է ենդրդեալի զարգացման հետ: Ոորհրդային Հայաստանը զուրկ է վառելանյութերից, յեթև հաշվիչ չափներ հայտարարված Զաջուռի համեմատական չափով չնչին քանակությամբ քարածուխը, վորը մեր արդյունաբերական զարգացման տեսակետից չոչափելի դեր չի կարող կատարել, և Սեանի շրջանում գտնվող տորֆը, վոր դեռ չի ոգտագործվում: Միակ հիմնական ուժը, վորի վրա զարգանում է և ավելի մեծ թափ է ստանալու մեր սոցիալիստական արդյունաբերությունը, դա հիդրոէլեկտրոէներգիան է:

Նյութերոներգիայի տեսակետից մենք ունենք հսկայական չոգտագործվող ռեսուրսներ: Մենք ունենք Սեանը—Զանգվի սխտեմը, իր հրակայական եներգեալի ռեսուրսներով, մենք ունենք նրա հարակից Դերեզայի խոշոր սլորոյեմը, ապա Արաքսի և Բաղարչայի հսկայական սլորոյեմները: Սրանց վրա ավելացրած մեր բազմաթիվ մանր ու մուշր տեղերի բազմաթիվ և բազմաբովանդակ եներգեալի ուժերը, ապա մեզ համար պարզ կլինեն այն հսկայական եներգեալի ռեսուրսները, վոր մենք ունենք մեր յերկրում:

Մեր շրջանային ռեսուրսների ոգտագործման պրոցեսում մենք պիտի նկատի ունենանք յերկու հիմնական խնդիրներ, յերկու հիմնական դրություն և այդ հիմնական դրություններից պիտի բղխեն մեր աշխարհը:

Սրբաբերեցին՝ Դա. Հալիբյան, Ան. Ճուղուրյան

առանձինները. ա) ջրային ռեսուրսների ոգտագործումը պիտի տարվի այն ուղղությամբ, վոր եներգետիկան սերտ կերպով շաղկապված լինի վոտոգման գործի, վոտոգման պահանջների հետ, բ) հիմնականը մեր ամբողջ Անդրկովկասի ջրային ռեսուրսները պիտի ընդունենք մի ամբողջութուն և նրա ոգտագործումը շաղկապենք Անդրկովկասի ամբողջ տնտեսության եներգետիկ և վոտոգման պահանջների հետ: Անդրկովկասի տնտեսությունը մի ամբողջական տնտեսություն և, մեկը մյուսի հետ շաղկապված, և ջրային հարստության կոմպլեկսային ոգտագործումը պետք է ըղխի Անդրկովկասի սոցիալիստական տնտեսության անհրաժեշտ պահանջներից և պայմաններից:

Անհրաժեշտ է այստեղ շեշտել, վոր դժբախտաբար մինչև վերջերս Անդրկովկասում ելեկտրոէլինարարության և ջրաէլինարարական ինժեներային կառուցումների ընթացքում, այս յերկու հիմնական պայմանները աչքաթող են արված յեղել վոչ միայն Անդրկովկասյան մասշտաբով, այլև շատ անգամ այդ շաղկապումը տեղի չի ունեցել հանրապետությունների ներսում ջրային և եներգետիկ որդանների աշխատանքի պրոցեսում: Շատ անգամ տարերային կերպով կառուցվել են ելեկտրոկայաններ, կառուցվել են ջրանցքներ, առանց հիմնական ուսումնասիրության յենթարկելու ջրային ռեսուրսների մաքսիմալ, ռացիոնալ ոգտագործումը, առանց շաղկապելու իրար հետ եներգետիկան և վոտոգմումը ձևապես, առանձնապես Սորհրդային Հայաստանում մենք ընդգրկել ենք այդ ուղղությունը՝ Շիր-կանայր սպասարկում է և՛ վոտոգման կարիքներին, և՛ եներգետիկային: Քանաքեռոգեսը նույնպես շաղկապված է Ղուբրի վոտոգման գործի հետ, առաջին Յերեանդեսը կապված է Ալդր-լձի ջրանցքի վոտոգման գործի հետ և այլն: Սակայն Անդրկովկասյան մասշտաբով չկա անհրաժեշտ շաղկապում Ձախեներգոյի և Ձախվոդխոդի աշխատանքները շատ անգամ հակադրվում են մեկը մյուսին: Դրան ապացույց այն հակադրությունը, վոր մենք ունեցանք Ձախվոդխոդի կողմից ջրային վոտոգման ծրագրի տեսակետից՝ ուղղված եներգետիկայի դեմ Սևանի ոգտագործման հարցում:

Ներկայումս, յերբ մենք դանվում ենք յերկրորդ հնգամյակի չեմքին, ուր ծառացած են հակայական խնդիրներ արդյունաբերության, դյուդատնտեսության և տրանսպորտի բնագավառներում, և մենք դործնականում կանգնած ենք Սևանի պրոբլեմի, Մենզիշաուրի, Թարթարի, Սրամի, Թափարավանի, Կարասախլալի, Ռիոնի պրոբլեմների դործնական լուծման խնդիրների առաջ, վորոնցից շատերի լուծմանն արդեն անցել ենք, յերբ մեր առաջ ծառացած են Միլի, Մուդանի, Սարգարարադի և այլ դաշտերի վոտոգման հարցերը, վորոնք պիտի անհրաժեշտորեն

լուծվեն յերկրորդ հնգամյակում, վորպես մեր բամբակագործության հիմնական բաղանները, յերկայումս ավելի քան յերբեք այդպիսի դեներալ շաղկապման խնդիրն անհետաձգելի պահանջ է. նա ըղխում է մեր՝ Անդրկովկասի տնտեսության կարիքները, նրանց պլանային լուծման անհրաժեշտությունից: Այդ խնդիրները մեկուսացած են առանձին-առանձին հանրապետությունների սահմանում լուծողները վաստորեն դառնում են ինքնամիտի տնտեսության կողմնակիցներ, վորը անհանդուրժելի յետոցիալիստական տնտեսության կառուցման տեսակետից և վնասակար հենց նույն հանրապետության ընդհանուր տնտեսության լայն դարդացման տեսակետից: Բնականաբար նման վաղ տնտեսության դրվածքը հիմնովին պիտի խարազանվի վորպես նացիոնալ ուկլոնիստական դրվածք:

ՀԻՄՆԱԿԱՆ ՎԵՃԸ ՍԵՎԱՆԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՇՈՒՐՁԸ

Հիմնական վեճը Սևանի ոգտագործման խնդրում, վոր տեղի ունեցրեց յայնի որդանների և եներգետիկ որդանների միջև, վերաբերում էր ոգտագործման ձևին և նպատակներին:

«Պրավդա»-ն № 68-ում հետեյալ ձևակերպումն է տալիս այդ վեճին. «վնասարարությունն ու քալլադյոդությունն Անդրկովկասի ջրային և բամբակային որդաններում կասեցրեց ջրամբարները կառուցման սկիզբը, մի շարք ինժեներ-իրրիգատորների միջև վեճ ծագեց՝ պրիմիտիվ պրոեկտ բացել Ձանդին, վորպես ջրմուղու կռան, նրանով իջեցնել Սևանը Ադրբեյջանի բամբակի դաշտերը: Ինժեներ Տեր-Աստվածատրյանը, Սևանի պրոբլեմի ենտուզիատոր, և մի խումբ նրա հետ աշխատող յերիտասարդները, վերջին միջանի տարրներում մղում էյին ուժեղ պայքար այդ պրոեկտի դեմ: Նրանք ապացուցում էյին Սևանի նման պրիմիտիվ ոգտագործման անողտակարությունը և վնասակարությունը: Մոտ ապագայում բավարար է դետերի բնական հոսանքը: Իսկ Սևանը, դանվելով մոտ 2000 մետր բարձրության վրա ծովի մակարդակից, այդ կոնգենսացիայի յենթարկված ելեկտրոններդիան է, դա պատրաստի տոկ է, վորը պահվում է հեղուկ ձևով:

Այսպիսով, ջրային և բամբակային որդանները դրել են խնդիր՝ բաց թողնել 300 խորանարդ մետր մի վարկյանում՝ բամբակի դաշտերը վոտոգելու համար:

Պարզ է, վոր բամբակի խնդիրը ևս մեր հիմնական հարցերից մեկն է, բամբակի անկախության խնդիրը մեղ համար խոշոր տնտեսական քաղաքական խնդիր է և նրա լուծմանը լծված է մեր կուսակցությունը, բանվոր դասակարգը և աշխատավոր դյուդացիությունը, ուստի բամբակի դաշտերի վոտոգման հարցը նույնպես պիտի լուծում ստանա առաջին հերթին: Սրա մասին յերկու կարծիք չի կարող լինել: Յենեյով այս տեսակետից, ջրային որդանները դրել էյին առաջին հերթին Սևանից վոտո-

դել Միլի, Մուղանի և Մեծ Սարգարարաղի անապատները: Սակայն ինչո՞ւմ եր կայանում նրանց հիմնական սխալը:

Հիմնական սխալը կայանում էր նրանում, վոր վերջիններս նկատի չէին առնում Անդրկովկասի եներգետիկայի պահանջները, վոր շափաղանց կարևոր, վճռական նշանակություն ունի արդյունաբերության համար: Վրոգման խնդիրներն ուղում են լուծել չափազանց պրիմիտիվ կերպով, դանց առնելով այն հանգամանքը, վոր Սեանն ամենից առաջ ունի եներգետիկ նշանակություն:

Իրրև հիմնական դրույր Անդրկովկասի ջրային հարստությունների ոգտագործման համար—պիտի ունենալ այն, վոր բարձրությունների վրա գտնվող բոլոր ջրերն ամբողջովին պիտի ոգտագործվեն եներգետիկայի նշանաբանի տակ, և միայն նրա համար ոգտագործվելուց հետո ուղտավայրում պիտի ոգտագործվեն վոռոգման հիմնական կարիքների համար: Վոչ մի կարիք ջուր մեր լեռնային գետերից և ջրամբարներից չենք, վորը նախորոք հնարավոր է ոգտագործել ելեկտրոեներգիայի համար, չպիտի վորոշ նպատակի ծառայելուց հետո իզուր հոսի: Ոգտագործելով եներգետիկայի համար, այնուհետև նրա ոգտագործումն այնպես դասավորվի, վոր լիովին կարողանա բավարարել վոռոգման կարիքները, առանձնապես տեխնիկական կուլտուրաների, առաջին հերթին բանապատկարծություն:

Անդրկովկասի, այդ թվում և ինքնուրույն Հայաստանի արդյունաբերության զարգացումը յերկրի եներգետիկ ուժերի ոգտագործման տեսակետից դրսև և մի շարք խոշոր պրոբլեմներ, վորոնց լուծմանը մենք ապել ընթերցող:

Մեր արդյունաբերությունն ապրում է իր հսկայական վերելքը և որ ապուր ապելի մեծ թափ և ստանում մեր յերկրի եներգետիկ բաղայից: Սակայն եներգետիկ ուժերի ոգտագործման տեսակետից կան մի քանի չափազանց կարևոր մոմենտներ, վորոնք անպայմանորեն պիտի հաշվի առնվեն մեր ջրային ռեսուրսների ոգտագործման դասավորման ու չափազանց տեսակետից:

Հայաստանում և թե ամբողջ Անդրկովկասում մեր եներգետիկ ուժերի ուժիմը տայիս և հսկայական պիկեր, հսկայական տոնմներ: Ծաղվա վորոշ յեղանակներին չափազանց ջրառատ, վորոշ կներին սառնամանիկ: Այս հանգամանքը տայիս և այն հետևանք է, որ հաջադանները տարվա վորոշ ջրառատ ջրմանում տայիս են, որ եներգետիկ, ապա նրանց եներգետիկությունն ընկնում է ջրի հոսքի հետ: Մյուս կողմից: Մյուս կողմից և ջրապետ, այդպես և ջրապետ, և արհեստական մեր գրեթե բոլոր խոշոր ելեկտրոկայանները:

Մեր գետերն ունեն առատ սեղոնային եներգետիկ: Մեր գետերի (ամբողջ Անդրկովկասի) ամբողջ մշտադատ եներգետիկ միջին թվով կաղմում է 30 տոկոս, մնացած 70 տոկոսը ունի սեղոնային բնույթ: Մեր թե քիմիական և թե մետալուրգիական արդյունաբերության զարգացումը չի կարող հանդուրժել նման դրույթուն, նման պիկեր:

Այս հարցի լուծումը պիտի ընթանա կամ դուրսից թանգարժեք չաղիային պահեստի ելեկտրոկառուցումներով, կամ ուղիղապես կերպով պիտի ունենանք ելեկտրոկայաններ՝ կարգավորման համար: Առաջինը չափազանց թանգարժեք է և եներգետիկ արժեքը բարձր: Պարզ և, վոր թանգարժեք եներգետիկ բաղայի վրա զարգացել մեր արդյունաբերությունը, մենք չենք կարող: Գիմիական արդյունաբերությունը պահանջում է առաջին հերթին եթան եներգետիկ: Ակներե և, վոր մեր ելեկտրոկայանները կարգավորումը պիտի ընթանա հիդրոեներգետիկ գծով:

Այսպիսով լրացուցիչ եներգետիկ մատակարարումը Անդրկովկասի ելեկտրոկայաններում այն չընտան, յերբ նրանք եներգետիկության ցածր մակարդակի վրա յեն, մեծ անհրաժեշտություն է: Այս կարևոր բացը լուծվելու յե միակայն մեր կառուցվելիք այն կայաններով, վորոնք ունեն ջրի մշտական միախառնակ ռեսուրսներ, իսկ այդպիսիք հաղվագյուտ են:

Սեանն իր հսկայական ջրամբարով այդ տեսակետից յեղակի յե և տայու յե խոշոր եներգետիկ այն ժամանակ, յերբ մյուս ելեկտրոկայանները ապրում են ամենացածր պիկը:

Այսպիսով՝ Սեանը հրապարակ է դալիս կարգավորելու կուտարի միջոցով Անդրկովկասի ելեկտրոկայանները: Նման դեր ունի կառարելու թափարավանը, իրամի հիդրոստանցիան, սակայն Սեանի դերն այդ տեսակետից չափազանց մեծ և առանձնահատուկ է:

Ունենալով այս կարևոր դերը, բնական և, այն պահանջը, վոր գրել են Անդրկովկասյան ջրային և բամբակագործական ողդանները՝ հանդեպ Սեանի, վոչ միայն պրիմիտիվ, այլև գերադրել, վոչ ուղիղապես և: Սեանի կոմիտեն չեր կարող հաղվել նման գրվածքի հետ:

Հրապարակ հանելով նման առաջարկի լիակատար անանակությունը, այնուամենայնիվ մեր առաջ ծառացած է Մուղանի, Միլի և Մեծ Սարգարարաղի վոռոգման խնդիրը, խնդիրներ, վորոնք հիմնական նշանակություն ունեն բամբակագործության զարգացման տեսակետից:

Միլի և Մուղանի անապատների վոռոգման հարցն արդեն մտել է իր ճշգրիտ հունի մեջ՝ Միլիգետուրի խոշոր պրոբլեմի լուծմամբ, վորի կառուցմամբ Գուրգետի վրա լուծվում է այդ անապատների միլիոնավոր

կերպով և հատուկ հիշրոմեակներով գիտական բյուրո՝ գիտական Դա-
միգովի գեկավարութեամբ:

Այսպիսով, Սեանն սկսում է լայն ուսումնասիրութեան յենթարկել
ամեն կողմից: Այդ ուսումնասիրութեանը տեղում են մի շարք տա-
րիներ, կատարվում են մի շարք գիտական հետազոտութեաններ և փոր-
ձեր, սխեմատիկ կերպով ուսումնասիրվում է ամեն մի խնդիր, փոր-
կապ ունի Սեանի հետ: Մենք այժմ ունենք հսկայական գիտական նյութ:
Այդ ուսումնասիրութեանները կազմում են հսկայական գիտական հա-
տորներ:

Միմիայն նման բազմակողմանի ուսումնասիրութեանից հետ, ունե-
նալով սպառիչ տվյալներ ու գիտական-փորձնական բացատրութեաններ
թե՛ Սեանի բնութագրի և թե՛ նրա ազդեցութեան վերաբերյալ, Սեանի
Պոմբոնե փորձում և անցնել այդ պրոբլեմի իրականացման՝ գործնական
ծրագրի մշակմանը:

ՍԵԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

✓ Սեանը խոշոր բարձրութեան վրա գտնվող չափազանց հարվածաշուն-
թներից է և ունի համապատասխան մեծություն ու խորություն, փորով
տնտեսական չափազանց կարևոր նշանակություն է ստանում:

Սեանը գտնվում է 1916 մետր ծովի մակերևույթից բարձր, մինչդեռ
Արարատյան հարթությունը գտնվում է 890 մետր բարձրության վրա,
տարբերությունը Սեանի և Արարատյան դաշտի մեջ կազմում է՝ 1-026
մետր: Այս հսկայական տարբերությունը հիմնական նշանակություն ու-
նի, փորովհետեւ դա կազմում է նախապայմանը և բնորոշողը Սեանի
հսկայական ենթերկրային սկզբունքների: 1-026 մետրի բարձրությամբ գա-
հավեթ հոսող ջրերը պարունակում են իրենց մեջ հսկայական ենթերկ-
րային ուժ: Միաժամանակ Սեանը՝ գերիշխելով Արարատյան դաշտի վրա՝
հնարավորություն ունի փոփոխելու վոչ միայն դաշտավայրերը, այլև
նախալեռային շրջանները, դարձնելով տալով տեխնիկական կուլտուրաներին՝
բամբակին, խաղողին, պտղաբուծութեանը, ծխախոտագործութեանը և
այլն: Սեանի տարածությունը 1-416 քառակուսի կիլոմետր է: Չոր բա-
ժանի տարածությունը հավասար է 3-475 քառ. կիլոմետրի, իսկ ամբողջ
բաժանի տարածությունը՝ 4-993 քառ. կիլոմետրի: Սեանը նորագույնի
հրվանդանով՝ Աղստախի թերակղզով՝ բաժանվում է յերկու մասի՝
Մեծ Սեանի և Փոքր Սեանի: Մեծ Սեանի տարածությունը 1-000 քառ.
կիլոմետր է, իսկ Փոքր Սեանինը՝ 400: Մեծ Սեանի ամենամեծ խորու-
թյունը 50 մետր է, իսկ Փոքր Սեանինը՝ 100 մետր, իսկ յերկուսի միջի
պերեփախ խորությունը՝ 36-40 մետր:

Սեանի ծավալը՝ համաձայն Յե. Ս. Մարկովի ուսումնասիրութեան
նախնական տվյալների՝ 54 է և կես միլիարդ խորանարդ մետր է, իսկ հա-
մաձայն Սեանի հիդրոգրաֆիկական ուսումնական հիդրոմետրոյի
նորագույն ուսումնասիրութեան ու տվյալների՝ հավասար է 58 ու կես
միլիարդ խորանարդ մետրի:

Շատերի կարծիքով Սեանն ունի տեկտոնական ծագում: Յե. Ս.
Մարկովի կարծիքով Փոքր Սեանն ունի ավելի ուշ ծագում՝ քան Մեծ
Սեանը:

Իջեցնելով Սեանի լճի մակարդակը 40 մետրով՝ լիճը կբաժանվի յեր-
կու մասի՝ Մեծ և Փ. Սեանի, թերևս միացած փոքրիկ գետակով: 52
մետր իջեցնելու դեպքում Մեծ Սեանը բոլորովին կչորանա և կաղաթի
հալյուր հաղար հեկտար հողամաս, իսկ Փոքր Սեանը՝ 20-000 հեկտար
հողամաս, փորոնցից գյուղատնտեսական ոգտագործման համար պիտանի
կլինի ավելի քան 100-000 հեկտար հողամաս:

Սեանն առհասարակ չի սառչում, սառչում է՝ հարյուր տարվա ըն-
թացքում, միջին թվով, վեց անգամ: Սեանի լճի մակարդակն ունի ի-
ջեցում և բարձրացում (колебание) տարեկան և դարավոր: Յուրա-
քանչյուր տարի՝ սկսած մարտ ամսից մինչև հուլիս ամիսը՝ Սեանի լճի
մակարդակը բարձրանում է, իսկ սեպտեմբերից մինչև փետրվար՝ իջնում:
Տարեկան միջին բարձրացումը իջեցումը կազմում է 40 սանտիմետր,
փորոշ տարիներում փորոշ զգալի չեղումներ են լինում այս միջին թվից:

Դարավոր իջեցում-բարձրացումը կազմում է յերկու ու կես մետր:
1926—1930 թվերին տեղի ունեցած լուրջ գիտական ուսումնասիրու-
թյունները, փորոնք կատարվել են բազմակողմանի և ձևոհատ գիտական
ուժերի միջոցով, տվել են Սեանի լճի հետևյալ պատկերը.

ա) Սեանը գետերի, առուների, աղբյուրների և հեղեղային ջրերի
միջոցով ընդունում է իր մեջ տարեկան 735 միլիոն խոր. մետր ջուր, բ)
Սեանի լճի հայելու վրա տեղումները տալիս են Սեանին միջին թվով
տարեկան 540 միլիոն խոր. մետր ջուր, գ) այսպիսով, Սեանի տարեկան
ամբողջ մուտքը հավասար է 1-275 միլիոն խորանարդ մետր ջրի, դ)
յեղը՝ Չոնգու գետի միջոցով՝ տարեկան հավասար է 30 միլիոն խորա-
նարդ մետրի, ե) Սեանա լճից Ֆիլտրացիա գոյություն ունի բացառապես
դեպի Չանգու գետը, միմիայն այդ շրջանում, և հավասար է 50 միլիոն
խորանարդ մետրի տարեկան, զ) տարեկան գոլորշիացումը հավասար է
1-195 միլիարդ խորանարդ մետրի:

Ինչպես վերը շեշտեցինք՝ իջեցնելով Սեանի լճի մակարդակը՝
մենք կստանանք մոտ 120 հաղար հեկտար նոր հողամաս, փորից քան
հաղարը մոտ պիտանի, իսկ հարյուր հաղար պիտանի գյուղատնտեսու-
թյան համար: Այս քանակից վոչ պակաս քան ութսուն հաղար հեկտարը

կերպովում և հատուկ հիդրոմետերային լայնությունը՝ գիտական Դո-
վիդովի ղեկավարությամբ:

Այսպիսով, Սեանն սկսում է լայն ուսումնասիրության յենթարկվել
ամեն կողմից: Այդ ուսումնասիրությունները տեղում են մի շարք տա-
լիներ, կատարվում են մի շարք գիտական հետազոտություններ և փոր-
ձեր, սխտեմատիկ կերպով ուսումնասիրվում է ամեն մի խնդիր, փոր-
կապ ունի Սեանի հետ: Մենք այժմ ունենք հսկայական գիտական նյութ:
Այդ ուսումնասիրությունները կազմում են հսկայական գիտական հա-
տորներ:

Միմիայն նման բազմակողմանի ուսումնասիրությունից հետո, ունե-
նալով սպառնիչ տվյալներ ու գիտական-փորձնական բացատրություններ
թե՛ Սեանի բնութագրի և թե՛ նրա աղբյուրության վերաբերյալ, Սեանի
Գոմիտեն փորձում է անցնել այդ պրոբլեմի իրականացման՝ դործնական
ծրագրի մշակմանը:

ՍԵԱՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

✓ Սեանը խոշոր բարձրության վրա գտնվող չափազանց հարկադրու-
թյուններից է և ունի համապատասխան մեծություն ու խորություն, փորով
անտեսական չափազանց կարևոր նշանակություն է ստանում:

Սեանը գտնվում է 1916 մետր ծովի մակերևույթից բարձր, մինչդեռ
Արարատյան հարթությունը գտնվում է 890 մետր բարձրության վրա,
տարբերությունը Սեանի և Արարատյան դաշտի մեջ կազմում է՝ 1.026
մետր: Այս հսկայական տարբերությունը հիմնական նշանակություն ու-
նի, փորովհետև դա կազմում է նախապայմանը և բնորոշողը Սեանի
հսկայական ենթակառուցվածքի ուսուցանանքի: 1.026 մետրի բարձրությամբ դա-
հայտ հոսող ջրերը պարունակում են իրենց մեջ հսկայական ենթակա-
ռուցվածք: Միաժամանակ Սեանը՝ գերիշխելով Արարատյան դաշտի վրա՝
հնարավորություն ունի փոփոխելու վոչ միայն դաշտավայրերը, այլև
նախախնային շրջանները, զարկ տալով տեխնիկական կուլտուրաներին՝
բամբակին, խաղողին, պտղաբուծությանը, ծխախոտագործությանը և
այլն: Սեանի տարածությունը 1.416 քառակուսի կիլոմետր է: Չոր բա-
սկյնի տարածությունը համար է 3.475 քառ. կիլոմետրի, իսկ ամբողջ
բասկյնի տարածությունը՝ 4.993 քառ. կիլոմետրի: Սեանը նորագույնի
հրվանդանով՝ Աղստափի թերակղզով՝ բաժանվում է յերկու մասի՝
Մեծ Սեանի և Փոքր Սեանի: Մեծ Սեանի տարածությունը 1.000 քառ.
կիլոմետր է, իսկ Փոքր Սեանինը՝ 400: Մեծ Սեանի ամենամեծ խորու-
թյունը 50 մետր է, իսկ Փոքր Սեանինը՝ 100 մետր, իսկ յերկուսի միջի
պերեկվալի խորությունը՝ 36-40 մետր:

Սեանի ծավալը՝ համաձայն Յե. Ս. Մարկովի ուսումնասիրության
նախնական տվյալների՝ 54 և կես միլիարդ խորանարդ մետր է, իսկ հա-
մաձայն Սեանի հիդրոգրաֆիկական ուսումնական հիդրոմետրային
նորադույն ուսումնասիրության ու տվյալների՝ հավասար է 58 ու կես
միլիարդ խորանարդ մետրի:

Շատերի կարծիքով Սեանն ունի տեկտոնական ծագում: Յե. Ս.
Մարկովի կարծիքով Փոքր Սեանն ունի ափսիս ու ծագում՝ քան Մեծ
Սեանը:

Իջեցնելով Սեանի լճի մակարդակը 40 մետրով՝ լիճը կբաժանվի յեր-
կու մասի՝ Մեծ և Փ. Սեանի, թերևս միացած փոքրիկ գետակով: 52
մետր իջեցնելու դեպքում Մեծ Սեանը բոլորովին կչորանա և կապա-
հարկուր հաղար հեկտար հողամաս, իսկ Փոքր Սեանը՝ 20.000 հեկտար
հողամաս, փորոնցից գյուղատնտեսական ոգտագործման համար պիտանի
կլինի ափսիս քան 100.000 հեկտար հողամաս:

Սեանն սոհասարակ չի սառչում, սառչում է՝ հարյուր տարվա ըն-
թացքում, միջին թվով, վեց անգամ: Սեանի լճի մակարդակն ունի ի-
ջեցում և բարձրացում (колебание) տարեկան և դարավոր: Յուրա-
քանչյուր տարի՝ սկսած մարտ ամսից մինչև հուլիս ամիսը՝ Սեանի լճի
մակարդակը բարձրանում է, իսկ սեպտեմբերից մինչև փետրվար՝ իջնում:
Տարեկան միջին բարձրացում՝ իջեցումը կազմում է 40 սանտիմետր,
փորոշ տարիներում փորոշ զգալի չեղումներ են լինում այս միջին թվից:

Դարավոր իջեցում-բարձրացումը կազմում է յերկու ու կես մետր:
1926-1930 թվերին տեղի ունեցած լուրջ գիտական ուսումնասիրու-
թյունները, փորոնք կատարվել են բազմակողմանի և ձեռնհաս գիտական
ուսերի միջոցով, տվել են Սեանի լճի հետևյալ պատկերը.

ա) Սեանը գետերի, առուների, աղբյուրների և հեղեղային ջրերի
միջոցով ընդունում է իր մեջ տարեկան 735 միլիոն խոր. մետր ջուր, բ)
Սեանի լճի հայելու վրա տեղումները տալիս են Սեանին միջին թվով
տարեկան 540 միլիոն խոր. մետր ջուր, գ) այսպիսով, Սեանի տարեկան
ամբողջ մուտքը հավասար է 1.275 միլիոն խորանարդ մետր ջրի, դ)
յեթը՝ Չանդու գետի միջոցով՝ տարեկան հավասար է 30 միլիոն խորա-
նարդ մետրի, ե) Սեանու լճից ֆիլտրացիա գոյություն ունի բացառապես
գետի Չանդու գետը, միմիայն այդ շրջանում, և հավասար է 50 միլիոն
խորանարդ մետրի տարեկան, զ) տարեկան գոլորշիացումը հավասար է
1.195 միլիարդ խորանարդ մետրի:

Ինչպես վերը չեղեցինք՝ իջեցնելով Սեանի լճի մակարդակը՝
մենք կստանանք մոտ 120 հաղար հեկտար նոր հողամաս, փորից քան
հաղարը վոչ պիտանի, իսկ հարյուր հաղար պիտանի գյուղատնտեսու-
թյան համար: Այս քանակից վոչ պակաս քան ութսուն հաղար հեկտարը

պիտանի կլինի հացահատիկային կուլտուրաների համար, իսկ քսան հազարը ջրովի մարգագետինների: Այսպիսով, Սևանն իր ամբողջ մեծությամբ իր լուծման պրոցեսում վուջ միայն հրապարակ և գալիս իրրե խոշոր եներգետիկ բաղա մեր սոցիալիստական արդյունաբերության համար, վուջ միայն միաժամանակ վոռոգման ջրի շտեմարան մեր դաշտավայրի ու նախալեռնային շրջանի անջրգեի հողերի համար, այլև այդ պրորլեմի լուծմամբ մենք ստանում ենք հարյուր հազար հեկտար նոր հողամաս մեր գյուղատնտեսության համար:

Ի՞նչտի ջրային բալանս և ունենալու Սևանի լիճը՝ նրա մակարդակի տարբեր իջնեման պրոցեսում: Յերկար տարիները լայն դիտական ուսումնասիրությունը տալիս և այն թվերը, վորոնք բերվում են ստորև աղյուսակում:

Մակերևութի բնագրային (սկզբ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Մ Ո Ւ Տ Ք (միլ. քմ.)		Յ Ն Ն Ք (միլ. քմ.)		Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)
					Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)	Չոր կուտակող բաժնի (քառ. կմ.)		
0	3475	1416	0	540	73	1275	1195	50	1245	30
10	3560	1331	85	506	738	1244	1125	50	1175	69
20	3664	1227	189	466	741	1207	1037	50	1087	120
30	3789	1102	314	419	744	1163	931	0	931	232
40	3987	904	512	344	750	1094	814	0	814	280
50	4652	239	1177	96	770	866	215	0	215	651
60	4715	176	1240	70	772	842	188	0	158	684
70	4802	89	1327	37	775	812	80	0	80	732
80	4881	10	1406	4	777	781	9	0	9	772
90	4891	0	1416	0	777	777	0	0	0	777

Միմիայն բաղմակողմանի դիտական ուսումնասիրությունից հետո, վորը կատարվեց Խորհրդային Միության Գիտական Ակադեմիայի ղեկավարությամբ՝ մի շարք խոշոր գիտական ուժերի միջոցով, ստանալով լիակատար ավյալներ Սևանի հիդրոէլեկտրական, յերկրաբանական, հիդրոլոգիական, կլիմայական աղբյուրյան և դաշտավայրերը բավարարող աղբյուրների հետ ունեցած կապի մասին, ունենալով սպառիչ պատասխան այն բոլոր հարցերի և խնդիրների, վորոնք ծագում էին Սևանի պրորլեմի զործնական լուծման նախորդակին, միմիայն նման ուսումնասիրություններից հետո, մի շարք ինժեներներ՝ ընկ. Հ. Տեր-Աստվա-

ծառայանի ղեկավարությամբ՝ անցան Սևանի եներգետիկ սխեմի մշակմանը Չանգվիի կատակողում: Նրանք կարողացան մեղ տալ սխեմի տեսակետից հաջող կերպով մշակված մի դործ: Տվին մեղ Սևանի եներգետիկ պրորլեմի լուծումը՝ չաղկապված վոռոգման անհրաժեշտ ու հրատապ դործի հետ: Սևան-Չանգվիի մշակման եներգետիկ սխեման իր հավանությունն և դետեկտոր հորհրդային Միության համապատասխան դիտական և պրանային որդաններում՝ վորպես մի կատարյալ դործ, և արդեն Գանաբեի հիդրոէկայանի կառուցմամբ մենք անցել ենք այդ պրորլեմի լուծմանը, իսկ Գյումուշի հիդրոէկայանի կառուցմանը մենք անցնում ենք այս տարի, վորն այդ սխեմի ելեկտրոկայաններից ամենամեծն է:

Անցնենք հիդրոէկայանների սխեմին:


ՍԵՎԱՆ-ՉԱՆԳՈՒ ՀԻԴՐՈԷԼԵԿՏԱՆՆԵՐԻ ՍԽԵՄԱՆ

Սևանի հիդրոմեարյուրոյի ամենազորւշ հաշիվները տալիս են հետևյալ պատկերը: Սխեման ապագայում, ստեղծելով նոր հավասարակշռություն ջրի յեղի և մուտքի տեսակետից, հակառակ ներկա 80 միլիոն խոր. մետր ջրի ավելցուկի, կունենա 65 միլիոն խոր. մետր ավելցուկ: Նման դրություն կստեղծվի, յերբ Սևանի մակարդակը կիջնվի 50 մետր 70 տարուց հետո միայն, իսկ այդ շրջանում պահաս ջուրը Սևան-Չանգվիի պրորլեմի լուծման համար ծրարվում և վերցնել լճի դարավոր պահեստից:

Սևանի կոմիտեն, յեղնելով ելեկտրոններգիայի և վոռոգման ծրագրից, հարավոր դտավ բաց թողնել Սևանից տարեկան 375 միլիոն խոր. մետր ջուր դոտացիա վոռոգման կարիքների համար, իսկ 650 միլիոն խոր. մետր տարեկան դոտացիա տալ Չանգվիի հիդրոէկայանի համար:

Այդ քանակի դոտացիայի գեպում Սևանի դարավոր պահեստի ջուրը կսպառվի 70 տարվա ընթացքում, և ինչպես վերը շեշտեցինք, կստեղծվի նոր հավասարակշռություն մուտքի ու յեղի տեսակետից և ավելցուկի քանակի տեսակետից: Ինժեներ Տեր-Աստվածառայանի ղեկավարությամբ հրաժմում Սևան-Չանգվիի եներգետիկ ուսումնասիրության ծրագրի ընդգրկում և 10 խոշոր հիդրոէկայան, այն է՝ 1. լճի հիդրոէկայան, 2. Գարվանսարայի հիդրոէկայան, 3. Քաղսու, 4. Գյումուշի, 5. Արգնու, 6. Քանաքեռի, 7. Յերևանի առաջին հիդրոէկայան, 8. Յերևանի յերկրորդ, 9. Յերևանի յերրորդ և 10 Յեղվարդի հիդրոէկայան:

Նրանք պարզարևում են հետևյալ սխեմայով և աղյուսակով:



ԲՆՈՒԹԱԳՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿԸ

Խ. Ա. Ըստ կարգի	Ջրվեժներ	Դերվապեղայի յերկարությունը մեթրներով	Փախը (hanop) / անտառ (մետրներով)	Ջրածուցի անջրջանակի յերկարությունը մեթրներով (կապիկայանում)	Որակի և կարգի վերին ավազանները (կ. մետր)	Կարողությունը (կիլոլիտրներով)	Արտադրության վայրը (կիլոլիտր ժամ)
1	Լճային	8650	39	50	—	27600	90 միլիոն
2	Քարվանսարայի	23000	138	50	—	54000	313 »
3	Քաղսու	5000	30	55	—	8000	87 »
4	Գյումուշի	19000	299	55	80000	146000	860 »
5	Արղնու	2000	178	40	200000	60000	262 »
6	Քանաքեուի	14700	170	55	300000	82000	395 »
7	Յերեվանի 1	6800	86	55	300000	54000	210 »
8	» 2	8800	56	55	700000	46000	120 »
9	» 3	4100	10	50	—	4500	20 »
10	Յերվարդի	6500	40	13	—	4000	27 »
	Ընդամենը	98600	984	—	—	481300	2385 միլիոն

Սեանի լճից ջրի դոտացիա Չանդվին տալու յերկու վարիանտ և ծրագրված :

Առաջին վարիանտը ծրագրում և առաջին յրջանում Սեանի լճից ջուր ստանալ ջրահան մեքենաների միջոցով, այդ ջուրը տալով Չանդվին՝ նրա ներկա ընթացքի սկզբում : Սեանից նման ձևով ջուր ստանալն

այն առավելությունն ունի յերկրորդ վարիանտի (տոնելի սիստեմի) նկատմամբ, վոր տաանյակ միլիոնների հասնող ծախք չի պահանջում եկապլոտացիայի առաջին տարիներին :

Սակայն այս ձևը հնարավոր և մինչև 23 մետր խորության հասնելը, այնուհետև անպայման պիտի անցնել տոնելի կառուցման :

Յերկրորդ վարիանտը հենց սկզբից ծրագրում և անցնել տոնելի կառուցմանը :

Կա և յերրորդ վարիանտ վորն առաջարկել են իտալական եքսպերտները, սակայն այդ դեռ չի քննված : Այդ վարիանտով առաջարկվում և Սեանից մինչև լճի հիդրոկայանն ունենալ յերկու դուզընթաց ջրանցք՝ փոփոխակի գործող : Մեկը գործելու յե աստիճանաբար լճի մակարդակի իջեցման դուզընթաց, իսկ մյուսը խորացվելու յե, հետո յերկրորդը՝ խորացվածն և սկսելու գործել, իսկ մյուսը փակվելու յե և սկսվում և նրա խորացումը :

Առաջին կայանը լեակայանն և, վորը կառուցվում և տոնելի վերջում անմիջապես, վորի բրուտո ճնշումը կազմում և 73,40 մետր, լճի մակերևութի իջեցման հետ այդ ճնշումն աստիճանաբար իջնում և և հասնում և մինչև 23 մետրի : Նետոո ճնշումն սկզբում կլինի 65 մետր, իսկ իջեցման ընթացքում կհասնի 15 մետրի :

Ելեկտրոկայանի ուշժը լինելու յե 16.000 կիլովատ, եներգիայի քանակը՝ 90 միլիոն կիլովատ ժամ :

Յերկրորդը լինելու յե Քարվանսարայի հիդրաեկտրոկայանը : Այս կայանի ջրանցքն ունենալու յե 32 կիլոմետր յերկարություն, սկսվելու յե անմիջապես լճակայանից և կառուցվելու յե Քարվանսարա գյուղի մոտերքը : Կայանի ջրաճնշումը լինելու յե 136 մետր, կայանի ուշժը՝ 54 հազար, տարեկան եներգիա՝ 313 միլիոն կիլովատ ժամ :

Յերրորդը Քաղսու հիդրոկայանն և : Քարվանսարայի կայանից սկիզբ և տոնում Քաղսու կանալը հինգ կիլոմետր յերկարությամբ, և կառուցվում և Քաղսու հիդրոկայանը : Ճնշումը՝ 185 կիլոմետր : Կայանի ուշն 8.000 կիլովատ, տարեկան եներգիա՝ 87 միլիոն կիլովատ ժամ : Այս փոքրիկ կայանը մտցված և սիսեմի մեջ, վորպեսպի ջուրը չքնա Չանդվի հոսանքով և աղատ լինի կայարանների համար վնասակար ձևով ստեղծուց : Սակայն այս կայանն ինքնուրույն կերպով իսկ չահավետ և : Առաջարկվելու կա այդ հիդրոկայանի փոխարեն ավելացնել Քարվանսարայի և Գյումուշի կայանների ճնշումը :

Չորրորդը Գյումուշի հիդրոկայանն և : Սրա ջրանցքը սկսվում և Քաղսու կայանից և գնում և Չանդվի ձախ ափով : Ջրանցքի յերկարությունը 18,8 կիլոմետր և : Որակի կարգավորման բառինը՝ 80.000 խոր. մետր : Նետոո ճնշումը՝ 298,5 մետր, կայանի ուշժը՝ 146 հազար

կիլովատ, տարեկան եներգիան՝ 860 միլիոն կիլովատ ժամ: Գյուղացի կայանը Սևան-Ձանգլի կայաններից ամենամեծն է:

Վեցերորդն Արգու հիդրոկայանն է: Այս կայանի որակյան կարգավորման բաժնյեը 200 հազար խորանարդ մետր է: Կայանի ուժը՝ 60.000 կիլովատ: Տարեկան եներգիան՝ 262 միլիոն կիլովատ ժամ:

Վեցերորդը Քամախեռի հիդրոկայանն է: Ջրանցքի յերկարությունը՝ 14,5 կիլոմետր: Որակյան կարգավորման բաժնյեը՝ 190 հազար խոր. մետր: Կայանի ճնշումը՝ 170 մետր, կայանի ուժը՝ սկզբում 42.000 կիլովատ, հետագայում՝ 82.000 կիլ., տարեկան եներգիան՝ 395 միլիոն կիլովատ ժամ:

Յոթերորդը Յերեվանի առաջին հիդրոկայանն է: Յերեանի ներկա առաջին հիդրոկայանից մոտ 290 մետր վերև ծրագրվում է կառուցել նոր ելեկտրոկայան. ջրանցքն սկսվելու յե Քանաքեռի կայանից. յերկարությունը լինելու յե 6,6 կիլոմետր: Որակյան կարգավորման բաժնյեը՝ 300 հազար խոր. մետր: Կայանի ուժը՝ 54 հազար կիլովատ, տարեկան եներգիան՝ 210 միլիոն կիլովատ ժամ: Նետոո ճնշումը՝ 86 մետր:

Ութերորդը Յերևանի յերկրորդ հիդրոկայանն է: Ջրանցքի յերկարությունը՝ 3,79 կիլոմետր: Որակյան կարգավորման բաժնյեը՝ 700.000 խոր. մետր: Նետոո ճնշումը՝ 56 մետր: Տարեկան եներգիան՝ 120 միլիոն կիլովատ ժամ: Այդ հիդրոկայանի ջրանցքի կիսին (Զոսպեղում) շինվում է Յերևանի յերկրորդ, ժամանակավոր հիդրոկայանը: Ապագայում այժմյան ձախ ամի ջրանցքի ջուրը ակվեզուկի միջոցով անցկացվելու յե աջ ամր և տարվելու յե մշտական հիդրոկայանի տեղը:

Խնմերորդը՝ Յերևանի յերրորդ հիդրոկայանն է: Ջրանցքի յերկարությունը՝ 4,15 կիլոմետր: Նետոո ճնշումը՝ 9 մետր: Կայանի ուժը՝ 4.500 կիլովատ: Տարեկան եներգիան՝ 20 միլիոն կիլովատ ժամ:

Տասներորդը Յեղվարդի հիդրոկայանն է: Այս կայանը կառուցվելու յե Յեղվարդի ջրամբարի վրա: Ճնշումը՝ 40 մետր, կայանի ուժը՝ 4.000, տարեկան եներգիան՝ 27 միլիոն կիլովատ ժամ:

Այսպիսով բոլոր ելեկտրոկայանների ուժը հասաւոր է 480 հազար կիլովատի, տարեկան եներգիան՝ յերկու միլիարդ յերեք հարյուր ութսուն ու հինգ միլիոն:

Սևանի պրորեկտը հրապարակ է դալիս վորդես ամիսի մեծ պրորեկտ, քան Գնեսպրոստրոյը: Այս հսկայական եներգիայի բաղայի վրա գորդանալու յե մեր արդյունաբերությունը, վոր հիմնովին փոխելու յե մեր յերկրի տնտեսական պատկերը և միաժամանակ դալիս է կարգավորելու Անդրկովկասի ելեկտրոկայանների տարեկան նորմալ ընթացքը: Այս հսկայական եներգիայից մոտ 500 միլիոն կիլովատ ժամ տրվելու յե անդրկովկասյան խմբին՝ կարգավորելու համար անդրկով-

կասյան ելեկտրոկայանները, իսկ Խ. Հայաստանի արդյունաբերությանը տրվելու յե մոտ յերկու միլիարդ կիլովատ ժամ եներգիա:

Մենք արդեն ընդդեցին, վոր Սևանի պրորեկտը վոր միայն եներգեաիկ պրորեկտ է, այլև փոռոգման: Սևան-Ձանգլի ողտադործման մշակված սխեմի հիմնական առավելություններից մեկն այն է, վոր նա այդ յերկու խողիները յուծում է կոմպլեկսային ձևով:

Սևանի ջրի տալին թեկնածուն փոռոգման տեսակետից՝ հանդիսանում են հարավային, հարավ-արեւելյան և հյուսիս-արեւմտյան Ղոբը՝ մինչև 1.200 մետր բարձրությամբ և 46.000 հեկտար Հայաստանի և 6000 հեկտար Նախիջևանի հանրապետության սահմաններում: Այս դալիս են կոտայքը՝ 23.000 հեկտար տարածությամբ՝ 1.200-ից մինչև 1.700 մետր բարձրությամբ: Արախարսի հարթությունը՝ մինչև 3.000 հեկտար տարածություն: Յեղվարդի հարթությունը՝ 19.000 հեկտար տարածությամբ՝ նույնպես փոռոգվելու յե մասամբ Սևանից և մասամբ Քասախից, յերբ Վաղարշապատի հարթությունը, Աշտարակն ու Ուշականը ջուր դատանան Սևան-Ձանգլի սխեմից, իսկ Քասախ գետի ջուրը կապատվի Յեղվարդի դաշտի վերին մասը փոռոգելու համար, նորոգելով այն հին առուն, վոր սկսվում է Աստվածընկալի տակից և դուրս է գալիս Համամլու գյուղի մոտ, չարունակվելով դեպի Նոխուս Թափա:

Այս դալիս է Վաղարշապատի հարթությունը՝ 7.200 հեկտար տարածությամբ: Վոռոգվելու յեն վորոշ հողամասեր՝ Աշտարակի շրջանում Քասախի և Ամբերդի մեջ ընկած՝ մինչև 1.300 մետր բարձրության:

Այնուհետև Սևան-Ձանգլի սխեմի վրա յե դրվում Սարգարադի հիմնական մասի փոռոգումը: Այստեղ փոռոգվելու յե նաև Մեծ Սարգարադի շրջանում գտնվող Շամիրանի անապատը՝ 30 հազար հեկտար տարածությամբ և Կենտրոնական Սարգարադը՝ 26 հազար հեկտար ընդամենը՝ 160 հազար հեկտար տարածություն, վորից 90 հազար հեկտարը՝ բամբակադոծության համար: Մենք այս թվերից տեսնում ենք, վոր Սևան-Ձանգլի պրորեկտի լուծումը հսկայական դեր է կատարում և տնտեսության բնագավառում՝ առանձնապես թանգարժեք տեխնիկական կուլտուրաների մշակման գործում: Սևանի պրորեկտի լուծումը՝ նրա եներգետիկ մասը՝ նաեւելու յե 220 միլիոն ուղրի, մի գումար, վոր այդպիսի պրորեկտի լուծման համար համարվում է վոր խոշոր: Կառուցման ավարտումները պիտի կատարվեն յերկրորդ հնգամյակի ընթացքում:

ԱՆՀԻՄՆ ԱՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սևանի պրորեկտի լուծման դեմ՝ անտեղյակ և դիլետանտ անհատներ բերում են մի քանի արգումենտներ, ցանկանալով նսեմացնել նրա հսկայական տնտեսական նշանակությունը. որինակ՝ ա) Աղմաղանից հոռոգ առնորակ աղբյուրները (Ղրխրուլաղ և այլն), վորոնք խմելու ջուր են

տալիս Յերեան քաղաքին և Կոտայքի գյուղերին, կարող են պակասել կամ չբանալ, բ) իջեցնելով Սեանը՝ կարող ե փոխվել շրջակայքի կլիման և վատ հետեանքներ ունենալ շրջակա տնտեսութեան վրա:

Այս յերկու արդումենտները վոչ մի հիմք չունեն:

Ինչպես փերը շեշտեցինք, Սեանը Ֆիլարացիա յե տալիս միմիայն Յերեանովկա-Որդաքովի շրջանում, տալով ջուր Ռեդամալի, Քարվանսարայի և Մաքրափանքի մեծ աղբյուրներին, հետևողես մնացած բոլոր աղբյուրները վոչ մի կապ չունեն Սեանի լճի և նրա ջրերի հետ: Այս դրութեան ապացուցում և նրանով վոր Այմաղանի լեռնաշղթան իր ալն մասով, վորով չլիթալում և Սեանի լիճը, ունի այնպիսի կապութեան, վոր ջուր չի անցկացնում իր մեջ (պորֆիրիդներ և այլն) և, հետևապես, խոչընդոտ և հանդիսանում Ֆիլարացիայի: Այդ բոլոր աղբյուրների մանրամասն քիմիական հետադոտութեանը ցույց ե տալիս, վոր դրանք քիմիական տեսակետից վոչ մի առնչութեան չունեն Սեանի ջրի հետ:

Ղրխրույաղի աղբյուրները անունդ են ստանում Այմաղանի լեռներից, ուր հոսող գետեր դոյութեան չունեն: Ուստի այստեղ կատարվող տեղումները խորանալով լավայի ճեղքվածքներով՝ կաղմում են ուժեղ աղբյուրներ: Այս աղբյուրների քանակը—գերեւոր համասար և այդ շրջանի ջրահավաք տարածութեան և նորմալ հոսանքին, վոր թեորեւորական հաշիվներով կարող են տալ այդ տարածութեան վրա տեղումները:

Նույնքան անհիմն և այն արգումենտացիան, ըստ վորի, Սեանի լճի մակերևութին իջեցնելով կփտթարանան շրջակայքի կլիմայական պայմանները: Միանգամայն ընդհակառակն: Այստեղ ես լայն գիտական ուսումնասիրութեանը դալիս ե ապացուցելու, վոր թե Սեանի մոտակա շրջակայքի և թե մանավանդ Արարատյան դաշտի ու նախալեռնային շրջանի կլիմայական պայմաններն զգալիորեն կփոխվեն զեպի լավը, զեպի բարեխառն, Սեանի ջրերի ոգտագործման պրոցեսում: Վոտուելով Արարատյան դաշտի բուսականութեանից դուրկ անապատները և նախալեռնային շրջանի դուրը, մենք այդ շրջաններն ենք մոցնում հսկայական քանակութեամբ ջուր, վոր դոյորչիացման միջոցով կուժեղացնի և հաճախակի կզարմնի միջոյրտային տեղումները, վորոնցից դուրկ են Արարատյան դաշտի ու նախալեռնային շրջանները, ալգալիտով միանգամայն կլիմայի միջ շրջանի կլիմայական պատկերը զեպի լավը: Յեթե սրա վրա ավելացնենք և այն հանգամանքը, վոր վոտուելով հսկայական անապատներ և դուր, մենք նրանց խոշորագույն մասի վրա կունենանք այդ զիններ, ծառատունկներ (պոպուսու ծառեր), սոյա պարզ կլինի, վոր այդ հսկայական բուսականութեանը հիմնովին կփոխի Արարատյան դաշտի կլիմայական—կոնտինենտալ պատկերը զեպի բարեխառն վիճակը:

Ինչ վերաբերում և Սեանի մոտակա շրջանի կլիմայական պայմաններին, այստեղ ես ուսումնասիրութեանները ցույց են տալիս, վոր մենք

կունենանք դոյադատնետեութեան համար այլ պատկեր: Այդ շրջանում դոյադատնետեական աշխատանքները չափազանց ուշ են սկսվում, վորովհետեւ դարձն ուշ և դալիս Սեանի աղբեցութեան պատճառով, իսկ Սեանի մակարդակի իջեցման պրոցեսում մենք այդտեղ ավելի շուտ դարձն կունենանք, դոյադատնետեական կուտուրաների դարդացման համար նոյստավոր, մոտավորապես այնպիսի կլիմայական պայմաններ կլսանեղծվեն, վորպիսին մենք այժմ ունենք Լենինականի շրջանում: Միայն ձմեռվա կլիման ավելի կցրտի և կմոտենա այն տարիներին, յրեր Սեանը ստոչում և և զրկվում և իր շրջակայքի կլիմայի վրա աղբեղու հնարավորութեան յունից:


ՄԵԾ ՊՐՈԲԼԵՄԻ ԼՈՒԾՄԱՆ ՆԱԽՈՐՅԱԿԻՆ

Մենք արդեն անցել ենք Սեանի հսկայական պրոբլեմի լուծմանը: Այս տարի վերջացնելու յենք ելեկտրոգիդանտներից մեկը՝ Քանաքեռի հիդրոէկայանը, վոր կաղմում և Սեան-Չանդլի պրոբլեմի մի մասը, ըսկըսել ենք մի նոր գիզանտի կառուցում, դա Գյումուշի խոշոր ելեկտրոէկայանն և: Կառուցում ենք Յերեանի Կարբիդի խոշոր գործարանը, կլերջացնենք Ղուերի մի խոշոր մասի վոտուելով՝ սկսած Քանաքեռից մինչև Արադոյան. այս ջրանցքով կենդանութեան կոտանան այդ շրջանի անապատները և նոր թափ կհաղորդեն մեր սոցիալիստական դոյադատնետեութեանը: Սակայն, պետք և շեշտել, վոր մեր յերկրորդ հնգամյակը գլխավորապես պիտի ընթանա Սեանի պրոբլեմի լուծման նշանաբանի տակ, նրանից բղխող արդյուսաբերական վերելքի և հսկայական տերիտորիաների վոտուելման նշանաբանի տակ: Մեր կուսակցութեան զեկավարութեամբ՝ մենք պետք և մոբիլիզացիայի յենթարկենք մեր յերկրի բոլոր կենտունակ ուժերը՝ վերջացնելու Սեանի պրոբլեմի լուծման գործը: Մեր այն ունինիկական ուժերը, վորոնք անվերապահորեն վարել են սոցիալիզմի կառուցման գործին, պիտի լարեն իրնց ուժերը, իրնց գիտութեանը և տաղանդն սպաս զենելով այս պրոբլեմի լուծմանը: Մեր վողջ աշխատավորութեանը պիտի հրապարակ դա իր սոցիալիստական ենտուգիաղմով՝ սոցիալիզմի այս խոշոր կոթոններից մեկն իրականացնելու:

Չկա անաղիկ մի բերդ, վոր բայելիկները չգրավեն, —ասել և մեր կուսակցութեան առաջնորդ ընկ. Ստալինը:

Իորհրդային Հայաստանի լայլելիկները զեկավարութեամբ մեր աշխատավորութեանը կլուծի ՍԵՎԱՆԻ ՊՐՈԲԼԵՄԸ:

(Տես հոդվածին կցված քարտեզները):



ՔԱՐՏԵԶ

Սեփանի լճի խորությունների

Մասշտաբ 1:250.000.

- Պայմանական նշաններ
- խորությունների հավասարագիծը տասը մետր խորության ընդմիջումներով:
 - խորություն. հավասարագիծը մեկ մետր խորության ընդմիջումներով:
 - 47-48 մետր խորությունների մեջ գտնված տարածությունը:
 - 48-49 " " " "
 - 49-50 " " " "
 - Ապագա ջրերի ճանապարհը մեծ Սեփանի հատակով:



Բուխիբյանի
ժողովրդական

Անանիոսյան

Զրախ

Մանուկ

Բաղրամյան

Բաղրամյան

Բաղրամյան

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Զրախ

Սեֆանա լիճը ենթադրեցի
նպատակներով ոգտագործելու
Ս Խ Ե Մ Ե Ն

Պայմանական նշաններ

- 1. Զրախ
- 2. Զրախ
- 3. Զրախ
- 4. Զրախ
- 5. Զրախ

20.500

3եր. Գ. Ե. Ս. I

3եր. Գ. Ե. Ս. II

3եր. Գ. Ե. Ս. III

4300

23.000

ՀՀ Ազգային գրադարան



NL0281468

10129